«ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրական գործակալների մասնագիտական պատասխանատվության ապահովագրության կանոններ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն 01 առ 08.08.2023թ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է՝
08.08.2023թ.-ից

Կոդ՝ 04.07.02
Խմբագրություն՝ 1.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ / ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ 4
5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 4
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 5
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 6
8. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 8
10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 10

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ապահովագրական գործակալների մասնագիտական պատասխանատվության ապահովագրության սույն կանոնների (այսուհետ նաև՝ Ապահովագրության կանոններ և/կամ Կանոններ) և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ (այսուհետ՝ Ապահովագրող) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով ապահովագրական միջնորդ հանդիսացող անձանց հետ կնքում է մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր՝ կապված ապահովագրական միջնորդի մասնագիտական անփութության հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասի հատուցման հետ:

1.2. Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել ինչպես Ապահովադրի, այնպես էլ այլ անձի պատասխանատվության ռիսկը, ով Ապահովադրի կողմից նշված է ապահովագրության պայմանագրում որպես Ապահովագրված անձ:

1.3. Այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրում նշված չէ որևէ ապահովագրված անձ, ապահովագրված անձ է հանդիսանում Ապահովադիրը:

1.4. Ապահովադիրներ, ինչպես նաև անձինք, ում պատասխանատվության ռիսկն ապահովագրվում է մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով, կարող են լինել «ԷՖԵՍ» ԱՓԲԸ հետ միջնորդային գործունեության իրականացման պայմանագիր կնքած ապահովագրական միջնորդները:

1.5. Սույն Կանոնների համաձայն կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված հօգուտ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ հետ կնքված ապահովագրության պայմանագրերով ապահովադիր, ապահովագրված անձ կամ շահառու հանդիսացող անձանց (շահառուների), ում կարող է վնաս պատճառվել Ապահովադրի (անձանց, ում պատասխանատվության ռիսկն ապահովագրված է, այսուհետ՝ նաև ապահովագրված անձ) իրականացրած մասնագիտական գործունեության ընթացքում թույլ տրված սխալների և բացթողումների, մասնագիտական անփութության հետևանքով:

1.6. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնվել սույն Կանոնների առանձին դրույթների փոփոխության կամ բացառման և Կանոնների լրացման վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

1.7. Կանոնները հանդիսանում են դրանց համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի հավելյալ և անբաժանելի մասը:

1.8. Ապահովագրության կանոնների և վերջինիս հիման վրա կնքված ապահովագրության վկայագրերի/պայմանագրերի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է ապահովագրության վկայագրերին/պայմանագրերին:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված վերջինիս պարտավորության առաջացման հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցելու «ԷՖԵՍ» ԱՓԲԸ հետ կնքված ապահովագրության պայմանագրերով ապահովադիր, ապահովագրված անձ կամ շահառու հանդիսացող անձանց՝ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գործունեություն իրականացնելու արդյունքում թույլ տրված սխալների և բացթողումների հետևանքով պատճառված վնասը:

2.2. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապահովագրության օբյեկտ են հանդիսանում նաև Ապահովադրի/Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված իրավական

ծախսերի և ծախքերի հատուցման հետ, որոնք ապահովագրված անձինք կրել են կամ պետք է կրեն՝ կապված ենթադրյալ ապահովագրական պատահարների գծով իրենց վնասի հատուցման պահանջների ներկայացման հետ:

2.3. Սույն Կանոնների շրջանակներում իրավական ծախսերի և ծախքերի ներքո հասկացվում են դատական օրգաններում գործերի վարման ընթացքում Ապահովագրողի հետ համաձայնեցված իրավաբանական օգնության տրամադրման ծախսերը՝ ներառյալ փաստաբանների և այլ լիազոր ներկայացուցիչների ծառայությունների վճարները, փորձագետների ծառայությունների վճարները, ինչպես նաև Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ ծախսեր՝ կատարված ենթադրյալ և տեղի ունեցած ապահովագրական պատահարների հանգամանքների, Ապահովադրի մեղավորության աստիճանի պարզման նպատակով, ինչպես նաև երրորդ անձանց կողմից հայատարարված վնասի (կորուստի) հատուցման պահանջների վերացման/նվազեցման նպատակով:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրական միջնորդի միջնորդությամբ կնքված ապահովագարական պայմանագրի գործողության ընթացքում միջնորդի մեղքով առաջացած վնասը՝ ներառյալ մասնագիտական անփութության հետևանքով ապահովագրական միջնորդի կողմից ապահովադրին, ապահովագրված անձին կամ շահառուին հասցրած ուղղակի դրամական վնասները, պայմանով, որ հետևյալները տեղի են ունեցել միասին.

3.1.1. Ապահովադրի կողմից մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում վնասը պատճառվել է ապահովագրության վկայագրում սահմանված գործողության ժամկետում,

3.1.2. Երրորդ անձանց վնասի հատուցման պահանջները, հայցերը առաջին անգամ Ապահովադրին ներկայացվել են ապահովագրության վկայագրի գործողության ընթացքում և գրավոր,

3.1.3. Պատճառված վնասը հատուցելու Ապահովադրի պարտավորությունը ծագել է բացառապես ապահովագրության պայմանագրում սահմանված մասնագիտական գործունեության իրականացման արդյունքում:

3.2. Ապահովագրական ծածկույթը տարածվում է բացառապես Ապահովադրի/ապահովագրված անձի կողմից մասնագիտական գիտելիքների անհաջող, սխալ կիրառման դեպքերի վրա, երբ ապահովադիրը իր պարտականությունները կատարում է բարեխիղճ, խելամիտ և իրավասու է կատարելու պայմանագրով ստանձնած պարտականությունները:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ / ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ

4.1. Ապահովագրության ողջ ժամկետի ընթացքում բոլոր ապահովագրական պատահարների համար ընդհանուր ապահովագրական գումարը/հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է ապահովագրության պայմանագրում: Եթե հայցի բավարարման համար պահանջվի ավելի մեծ գումար, քան սահմանված է ապահովագրության վկայագրով/պայմանագրով, ապա Ապահովագրողի պատասխանատվության չափն այդ հայցի բավարարման մեջ առավելագույնը կարող է կազմել ապահովագրության պայամանգրով սահմանված չափը:

5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել պայմանական և ոչ պայմանական չհատուցվող գումար:

5.2. Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցումը, եթե վնասի մեծությունը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը:

5.3. Ոչ պայմանական չհատուցվող գումարի կիրառման դեպքում հատուցման չափը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

5.4. Չհատուցվող գումարը որոշվում է կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ արժեքի տեսքով:

5.5. Չհատուցվող գումարը սահմանվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար առանձին: Այն դեպքում, երբ տեղի են ունենում մի քանի ապահովագրական պատահարներ, չհատուցվող գումարը կիրառվում է յուրաքանչյուր պատահարի նկատմամբ:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

6.1. Ապահովագրության պայմանագրով ապահովագրավճարների չափերը Ապահովագրողի կողմից հաշվարկվում են՝ ելնելով ռիսկի աստիճանի գնահատման վրա հիմնված ապահովագրական սակագներից:

6.2. Մեկ տարուց պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրում, ապահովագրավճարը կկազմի տարեկան ապահովագրավճարի համապատասխան տոկոսը՝

Ապահովագրության Ժամկետը	Տարեկան ապահովագրավճարի նկատմամբ տոկոսը
մինչև 30 օր	25%
մինչև 60 օր	30%
մինչև 90 օր	40%
մինչև 120 օր	50%
մինչև 150 օր	60%
մինչև 180 օր	70%
մինչև 210 օր	80%
մինչև 240 օր	85%
մինչև 270 օր	90%
մինչև 365 օր	100%

6.3. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարը կարող է վճարվել Ապահովադրի կողմից միանվագ կամ տարաժամկետ կանխիկ կամ անկանխիկ ձևով: Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է ապահովագրության պայմանագրով: Ապահովագրավճարի վճարման օր է համարվում.

6.3.1. ապահովագրավճարի կանխիկ վճարման դեպքում Ապահովագրողի ներկայացուցչի կողմից գումարի ընդունման օրը,

6.3.2. ապահովագրավճարի անկանխիկ վճարման դեպքում Ապահովագրողի հաշվին միջոցների ստացման օրը:

6.4. Եթե ապահովագրավճարը կամ դրա այն մասը, որը այդ պահին պետք է վճարված լիներ (տարաժամկետ վճարման դեպքում) ապահովագրության պայմանագրով կամ տրամադրված հաշվով սահմանված ժամկետում դեռևս վճարված չէ, Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի դադարեցնելու ապահովագրության պայմանագիրը:

6.5. Սույն Կանոնների 6.4 կետով նախատեսված կարգով պայմանագրի դադարեցման դեպքում դադարեցման պահ է հանդիսանում՝

6.5.1. ապահովագրավճարի վճարման համար ապահովագրության պայմանագրում սահմանված ամսաթիվը, եթե պայմանագրի դադարեցման ծանուցագիրը Ապահովագրողի կողմից ուղարկված է Ապահովադրին ապահովագրավճարի վճարման համար սահմանված ամսաթվից 60 օրից ոչ ուշ,

6.5.2. ծանուցագրի ուղարկման ամսաթիվը, եթե պայմանագրի դադարեցման մասին այդպիսի ծանուցագիրը Ապահովագրողի կողմից ուղարկված է Ապահովադրի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ամսաթվի 60-րդ օրից ուշ,

6.5.3. Ապահովագրողը ազատվում է 6.5 կետում նշված ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման համապատասխան պահից տեղի ունեցած ապահովագրական պատահարների նկատմամբ ապահովագրական հատուցման իրականացման պարտականությունից: Ապահովադրի կողմից ապահովագրավճարի չվճարման այլ հետևանքները կարող են սահմանվել ապահովագրության պայմանագրով:

6.6. Եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահին ապահովագրավճարը (կամ դրա այն մասը, որն այդ պահին պետք է վճարված լիներ) ապահովագրության պայմանագրով կամ տրամադրված հաշվով սահմանված ժամկետում դեռևս վճարված չէ, Ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է մինչև մեկ տարի ժամկետով, եթե այլ ժամկետ չի նախատեսվում ապահովագրության վկայագրով/պայմանագրով:

7.2. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է պատասխանել Ապահովագրողի կողմից տրված բոլոր հարցերին, որոնք թույլ են տալիս գնահատել ապահովագրական ռիսկը:

7.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է պարունակել լրացումներ կամ բացառություններ Կանոններին:

7.4. Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի փոփոխություններ և լրացումներ կատարել սույն ապահովագրության կանոններում՝ նման փոփոխությունները կատարելուց առաջ հնգօրյա ժամկետում ծանուցելով Ապահովադրին:

7.5. Ապահովագրության պայմանագիրը դադարում է հետևյալ դեպքերում.

7.5.1. ավարտվել է պայմանագրի գործողության ժամկետը,

7.5.2. Ապահովագրողը ամբողջ ծավալով կատարել է Ապահովադրի հանդեպ պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները,

7.5.3. Լուծվել/դադարել է ապահովագրական միջնորդի և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ միջև կնքված միջնորդության պայմանագիրը,

7.5.4. Ապահովագրողի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել ապահովագրության կանոնների էական խախտում կամ ապահովագրության վկայագիրը/պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին (Ապահովագրողի լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ,

7.5.5. Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը ծանուցել է Ապահովագրության կանոնների դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին,

7.5.6. Ապահովադրի կամ Ապահովագրողի պահանջով (նախաձեռնությամբ): Վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին կողմերը պարտավոր են միմյանց ծանուցել ապահովագրության պայմանագրի դադարեցման ամսաթվից ոչ պակաս, քան 15 օր առաջ,

7.5.7. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և սահմանված կարգով,

7.5.8. ՀՀ օրենսդրության սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման ժամանակ,

7.5.9. ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոններով և ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.6. Սույն Կանոնների 7.5.6-րդ կետով նախատեսված դեպքում, երբ պայմանագիրը դադարում է Ապահովադրի պահանջով, Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, ընդ որում ապահովագրավճարի՝ չլրացած ժամկետի համար վճարված մասի հաշվարկման համար Ապահովագրողի կողմից հիմք են ընդունվում Ապահովադրի կողմից պայմանագրի համաձայն Ապահովագրողին փաստացի վճարված ապահովագրավճարների 80%-ը ((վճարված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողությանօրեր) * պայմանագրի չլրացած օրեր):

7.7. Սույն Կանոնների 7.5.6-րդ կետով նախատեսված դեպքում, երբ պայմանագիրը դադարում է Ապահովագրողի նախաձեռնությամբ, Ապահովագրողը Ապահովադրին ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրական պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը:

7.8. Սույն Կանոնների 7.5.4-րդ կետով նախատեսված հիմքով պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում և այս դեպքում Ապահովագրողը ազատվում է Ապահովադրին որևէ գումար վճարելու պարտականությունից:

7.9. Ցանկացած դեպքում, եթե ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տվյալ պայմանագրի ներքո տեղի է ունեցել ապահովագրական պատահար, որի արդյունքում Ապահովագրողը վճարել է, կամ պետք է վճարի ապահովագրական հատուցում, ապա պայմանագրի դադարեցման դեպքում ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:

8. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Սույն ապահովագրության պայմանագրով չեն հատուցվում.

8.1.1. Ապահովագրական ընկերությանը պատճառված վնասները,

8.1.2. «ԷՖԵՍ» ԱՓԲԸ հետ կնքված ապահովագրության պայմանագրերով ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու հանդիսացող անձանցից տարբեր ցանկացած այլ անձանց պատճառված վնասները,

8.1.3. Ապահովադրի մեղքով կորցրած, վնասված փաստաթղթերի կրկնօրինակների ստացման հետ կապված ծախսերը (պետական տուրք, փաստաթղթի ձևաթղթի արժեքը և այլն),

8.1.4. Ցանկացած ձևի և բնույթի տույժերը, տուգանքները, բաց թողնված օգուտը, բարոյական վնասը,

8.1.5. Ապահովադրի, Ապահովագրված անձանց (անձանց, ում պատասխանատվությունն ապահովագրված է) գործողությունների, անգործության արդյունքում պատճառված ցանկացած վնասները, որոնք գոյություն ունեին մինչև ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը,

8.1.6. Ապահովադրի և/կամ նրա աշխատակիցների և/կամ տուժողի դիտավորյալ գործողությունների արդյունքում պատճառված վնասները, ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում դիտավորյալ գործողություններին են նույնացվում նաև գործողությունները (անգործությունը), որոնց դեպքում վնասի հնարավոր տեղի ունենալը կանխատեսվում է բավականին մեծ հավանականությամբ և գիտակցաբար թույլատրվում է մեղավոր անձի կողմից,

8.1.7. Ցանկացած վնասները, որոնք պատճառվել և/կամ առաջացել են տարերային աղետների, ֆորս մաժորի, ցանկացած տեսակի գաղտնիքի հրապարակման արդյունքում,

8.1.8. Երրորդ անձանց գույքին, առողջությանը և/կամ կյանքին պատճառված վնասները,

8.1.9. Ապահովադրի աշխատակիցներին, ծառայողներին, ներկայացուցիչներին, ընտանիքի անդամներին պատճառված վնասները,

8.1.10. Պայմանագրային պարտավորությունների կատարումից հրաժարման, չկատարման արդյունքում պատճառված վնասները,

8.1.11. Ցանկացած վնասները՝ պատճառված Ապահովադրի/ապահովագրված անձի գործողությունների արդյունքում, որոնց որակավորումը չի համապատասխանում զբաղեցվող պաշտոնին (նրա վրա դրված պարտականություններին) կամ համապատասխան պաշտոն զբաղեցնելու (պարտավորությունների կատարման) կամ գործունեություն իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ որակավորումը, թույլտվությունը բացակայում է,

8.1.12. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վնասի փոխհատուցման ծավալները գերազանցող ծախսերը,

8.1.13. Կանոնների հիման վրա կնքված մանսագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետից դուրս տեղի ունեցած պատահարները և պատճառված վնասները,

8.1.14. ՀՀ օրենսդրությամբ և Ապահովագրության կանոններով սահմանված այլ վնասները և դեպքերը:

8.2. Ապահովագրության պայմանագրով չի հատուցի որևէ հայց կամ հայցեր, որոնք ծագել են՝

8.2.1. Ապահովագրական միջնորդի կողմից այնպիսի գործունեության/գործողությունների իրականացման արդյունքում, որոնք դուրս են «ԷՖԵՍ» ԱՓԲԸ կողմից ապահովագրական միջնորդին տրված լիազորությունների շրջանակներից և/կամ պատվիրակված չեն «ԷՖԵՍ» ԱՓԲԸ կողմից և/կամ չեն թույլատրվում ՀՀ օրենսդրությամբ,

8.2.2. որևէ ֆինանսական կորստի հետևանքով, որը կապված չէ մասնագիտական գործունեության իրականացման հետ,

8.2.3. արտոնագրերի /պատենտի/, հեղինակային իրավունքի, ապրանքների անվանման, ապրանքանիշերի, գրանցված նախագծի կամ արտոնագրերի բաշխման խախտման հետ կապված,

8.2.4. փաստաթղթերի (անկախ բնույթից՝ ձեռագիր, տպագիր կամ վերատպված որևէ այլ տարբերակով), կամ համակարգչային/էլեկտրոնային ձևով պահպանված ինֆորմացիայի կամ նյութական գույքի կորստի հետևանքով, որոնք կորել կամ ոչնչացվել են Ապահովադրին վստահված, նրա հոգածությանը կամ ղեկավարությանը հանձնված լինելու ընթացքում,

8.2.5. զրպարտանքի, չարախոսության, ցանկացած տեսակի գաղտնիքի բացահայտման հետևանքով,

8.2.6. Ապահովադրի կողմից պայմանագրի կամ որևէ այլ համաձայնագրի կամ երաշխավորագրի միջոցով սահմանված պատասխանատվության հետևանքով, որոնց պատճառով ընդլայնվում է Ապահովադրի իրավական պատասխանատվության շրջանակը,

8.2.7. Ապահովադրի կամ նրա աշխատակիցների կողմից կանխամտածված, անազնիվ, չարամիտ, հանցագործ կամ անօրինական գործողության հետևանքով Ապահովադրի դեմ հարուցած հայցերի պատճառով:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու, տուժողի՝ ապահովագրական հատուցման ստացման իրավունքի և այդ վնասը հատուցելու Ապահովադրի (անձի, ում պատասխանատվության ռիսկն ապահովագրված է) պարտավորության, ապահովագրական պատահարի և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի և պատճառված վնասների մեծությունների վերաբերյալ վեճի բացակայության դեպքում ներկայացված հայցերը բավարարվում են և ապահովագրական հատուցումը վճարվում է արտադատական կարգով:

9.2. 9.1-ում սահմանված դեպքում վնասի չափերի և ապահովագրական հատուցման գումարի որոշումը Ապահովագրողի կողմից իրականացվում է պատճառված վնասի փաստերի և հետևանքների հետ կապված իրավասու մարմինների փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով տեղեկանքները, հաշիվները և կատարված ծախսերը հավաստող այլ փաստաթղթերը: Ապահովագրական հատուցման գումարի որոշման նպատակով անհրաժեշտության դեպքում կարող է ներգրավվել Ապահովադիրը:

9.3. Վերը թվարկված փաստաթղթերի հիման վրա կազմվում է վճարման համաձայնագիրը՝ ստորագրված Ապահովագրողի, Ապահովադրի (անձի, ում պատասխանատվության ռիսկն ապահովագրված է) և տուժած անձի կողմից:

9.4. Ապահովագրողն իրավունք ունի ներգրավել անկախ փորձագետների սույն Կանոններում սահմանված իրադարձությունների ի հայտ գալու հետևանքով պատճառված փաստացի վնասի որոշման նպատակով:

9.5. Կանոնների 9.2. կետում թվարկված հանգամանքների հետ կապված տարաձայությունների/վեճերի առկայության դեպքում ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է դատարանի՝ ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

9.6. Ապահովագրական հատուցման վճարման համար Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

9.6.1. Ապահովագրական հատուցման գրավոր դիմում (Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պետք է գրավոր դիմումը Ապահովագրողին ներկայացնի վնասի պատճառման վերաբերյալ իրեն հայտնի դառանալուց հետո երեք ամսվա ընթացքում),

9.6.2. ապահովագրության պայմանագրի (վկայագրի) պատճենը,

9.6.3. Ապահովադրին (Ապահովագրված անձին) ներկայացված վնասի հատուցման հայցերը, պահանջները՝ կապված տեղի ունեցած իրադարձության հետ,

9.6.4. եթե ապահովագրական պատահար դիտվող իրադարձության նկատմամբ իրականացվել է անկախ փորձաքննություն՝ փորձագիտական հանձնաժողովի (փորձագետի) կազմած եզրակացությունը,

9.6.5. եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է դատական կարգով՝ վնասի պատճառման դեպքի հետ կապված հատուցման ենթակա գումարի չափերը ներառող դատարանի որոշումը (վճիռը),

9.6.6. եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է արտադատական կարգով՝ փաստը, հանգամանքները և պատճառված վնասի մեծությունը, ինչպես նաև Ապահովադրի պատասխանատվությունը սահմանելու հնարավորություն տվող հավաստող փաստաթղթեր, համապատասխան փորձաքննությունների արդյունքները, տեսաձայնագրություններ,

9.6.7. Ապահովագրողի կողմից գրավոր հարցման դեպքում ապահովագրական հայցի կարգավորման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

9.7. Եթե ապահովագրական պատահարի պահին Ապահովադրի (ապահովագրված անձի) պատասխանատվությունը ապահովագրված է եղել նաև այլ ապահովագրական ընկերությունների կողմից, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումն իր հետ կնքած ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի և Ապահովադրի (ապահովագրված անձի) բոլոր ապահովագրական պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

9.8. Եթե տուժած անձանց հասցված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադրի (ապահովագրված անձի), այլև այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տուժողին հատուցման ենթակա ընդհանուր գումարի և այլ մեղավոր անձանց կողմից վճարման ենթակա գումարի տարբերության մասով:

9.9. Ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարում է ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ դրական եզրակացություն կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

9.10. Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը, ապահովագրված անձը.

9.10.1. չի կատարել սույն Կանոններով սահմանված իր պարտականությունները,

9.10.2. Ապահովագրողին սահմանված ժամկետներում չի ներկայացրել սույն Կանոններով նախատեսված և ապահովագրական հատուցումը վճարելու որոշումն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, կամ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կազմված են սույն Կանոններով սահմանված պահանջների խախտմամբ,

9.10.3. ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքների վերաբերյալ հայտնել է թերի, անարժանահավատ տեղեկատվություն,

9.10.4. կատարել են այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում անհնարին են դարձել Ապահովագրողի կողմից ապահովագրական դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված գործողությունների իրականացումը (անհնարին է դարձել ապահովագրական գործի հետաքննության անցկացումը),

9.10.5. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովադիրը/Ապահովագրված անձը իրականացրել է երրորդ անձանց հատուցումը, տվել խոստումներ, արել վնասների կամավոր հատուցման առաջարկություններ, լիովին կամ մասնակի ճանաչել է իր մեղավորությունը, կատարել է որևէ գործողություն, ինչը կվկայի պատահարի գործում իր պատասխանատվության ընդունման մասին, կատարել այնպիսի գործողություններ, որոնք անհնարին կդարձնեն ապահովագրական պատահարի հանգամանքների պարզումն ու ուսումնասիրումը:

9.11. Ապահովադիրն իրավունք ունի սույն Կանոններով սահմանված ապահովագրական հատուցման համար փաստաթղթերը ներկայացնել հատուցման դիմումի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում և ընդունում է, որ այդ ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր սահմանված եռամսյա ժամկետը երկարաձգելու մասին որևէ միջնորդություն (այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 5 (հինգ) ամիս ժամկետով) չներկայացնելու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

9.12. Ապահովագրողը իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Սույն Կանոնների համաձայն կնքված պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության: